



This project is funded
by the European Union



ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԴԱՇՏԻ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ԿՈՈՊԵՐԱՏԻՎՆԵՐԻ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սույն հետազոտության նպատակն է ուսումնասիրել գյուղատնտեսական կոոպերատիվների զարգացմանը խոչընդոտող հիմնախնդիրները մասնավորապես՝ 1) գյուղատնտեսական կոոպերատիվների գործունեությունը կարգավորող օրենսդրական դաշտի և (2) կոոպերատիվների աջակցության պետական ծրագրի վերաբերյալ, վեր հանել այս ոլորտի առկա խնդիրները և մարտահրավերները¹, ինչպես նաև ներկայացնել հայեցակարգային առաջարկություններ չչ-ում գյուղատնտեսական կոոպերատիվների գործունեությունը կարգավորող օրենսդրական դաշտի բարելավման և գյուղատնտեսական կոոպերատիվների հետագա զարգացման ուղղությամբ :

Նշված նպատակին հասնելու համար ոլորտը կարգավորող օրենսդրության և քաղաքականության ուսումնասիրությունն իրականացվել է որակական և քանակական մեթոդներով՝ քաղաքականության և իրավական փաստաթղթերի վերլուծության, վիճակագրական տվյալների և փորձագետների հարցազրույցների միջոցով՝ հաշվի առնելով նրանց փորձառությունն ու կառույցի դերը տվյալ ոլորտում²: Ուսումնասիրության և վերլուծության են ենթարկվել ոլորտին առնչվող միջազգային և ներպետական օրենսդրությունը, Աշխատանքի միջազգային կազմակերպության ուղեցույցները և զեկույցները, միջազգային լավագույն փորձը, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և Եվրոպական միության արդարադատության դատարանի նախադեպերը և այլն: Սույն հետազոտությունն իրավական հիմնավորմամբ կներկայացնի անհրաժեշտ օրենսդրական, կազմակերպչական և քաղաքականության բնույթի փոփոխությունները և գործողությունները:

Հետազոտությանը նպաստելու և մասնակցելու համար երախտագիտություն ենք հայտնում այն կառույցի ներկայացուցիչներին, որոնց հետ հարցազրույցների արդյունքում պատրաստվեց այս զեկույցը, մասնավորապես, «Շեն» բարեգործական ՀԿ-ի, «ՕքսԷՋեն» երիտասարդության և կանանց իրավունքների պաշտպանության հիմնադրամի, ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի,

¹Թեև սույն հետազոտության առարկան գյուղատնտեսական կոոպերատիվներն են, հետազոտությունը կանդրադառնա կոոպերատիվներին ընդհանուր առմամբ:

²Սույն հետազոտության իրավական կարգավորումներին առնչվող եզրակացությունները և վերլուծությունը հիմնված են 2018թ. դեկտեմբեր-2019թ. հունվար ամիսներին գործող իրավական ակտերի և պրակտիկայի հիման վրա:

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի, ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամի» ներկայացուցիչներին:

Հետազոտությունը պատրաստվել է Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի շրջանակներում Հայաստանի Գյուղատնտեսական Դաշինքի կողմից իրականացվող «Մասնակցային քաղաքականություն՝ կայուն գյուղատնտեսություն» ծրագրի շրջանակներում:

Լիահույս ենք, որ հետազոտության արդյունքում հաջողվել է կազմել արժեքավոր զեկույց և առաջարկություններ, որոնք կնպաստեն գյուղատնտեսական կոպերատիվների կայացմանը և զարգացմանը, իրավական դաշտի կատարելագործմանը, ինչպես նաև ընդհանուր այս ոլորտում գործունեության ծավալող կառույցների աշխատանքներին:

Ի՞նչ է կոոպերատիվը

Կոոպերատիվ նշանակում է այն *անձանց ինքնավար միավորումը, որոնք կամավոր համախմբվել են իրենց ընդհանուր տնտեսական, սոցիալական և մշակութային կարիքները և ձգտումները բավարարելու նպատակով* համատեղ սեփականություն հանդիսացող և ժողովրդավարական ձևով վերահսկվող ձեռնարկության միջոցով³:

Գյուղատնտեսական կոոպերատիվ նշանակում է ագրոպարենային համակարգում գործունեություն իրականացնող քաղաքացիների և իրավաբանական անձանց անդամության վրա հիմնված ու իր անդամների գույքային փայավճարների կամավոր միավորման միջոցով մասնակիցների նյութական և այլ կարիքների բավարարման նպատակով ստեղծված իրավաբանական անձ⁴:

Ի՞նչ նշանակություն ունեն կոոպերատիվները

Կոոպերատիվները էական նշանակություն ունեն, քանզի կոոպերատիվների միջոցով քաղաքացիները կարողանում են արդյունավետ կերպով բարելավել իրենց կյանքը՝ միաժամանակ նպաստելով իրենց համայնքի և պետության տնտեսական, սոցիալական, մշակութային և քաղաքական առաջընթացին⁵: Կոոպերատիվները նպաստում են աշխատատեղերի ստեղծմանը, զբաղվածության ապահովմանը, սոցիալական ինտեգրմանը, աղքատության նվազեցմանը, ռեսուրսների մոբիլիզացմանը,

³Տե՛ս՝ Article 2, R193 - Promotion of Cooperatives Recommendation, 2002 (No. 193), Recommendation concerning Promotion of Cooperatives, Adoption: Geneva, 90th ILC session (20 Jun 2002) - Status: Up-to-date instrument, ILO:

⁴Տե՛ս՝ «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին օրենքի» 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը: ՀՕ-190-Ն օրենքն ընդունվել է 2015թ. դեկտեմբերի 21-ին, ուժի մեջ է մտել 2016թ. հունվարի 9-ին:

⁵ Տե՛ս՝ 2001 United Nations Guidelines aimed at Creating a Supportive Environment for the Development of Cooperatives, para.1:

ներդրումների հայթայթմանը և դրանք տնտեսությանը ծառայեցնելու հարցում, բոլոր անձանց լիարժեք մասնակցությանը տնտեսական և սոցիալական զարգացմանը⁶:

Գյուղատնտեսական կոոպերատիվների դերը բավականին մեծ է, հաշվի առնելով այն հանգամանքը, որ գյուղատնտեսությունը հանրապետության տնտեսության առանցքային ոլորտներից մեկն է և գյուղական համայքների բնակիչների մեծ մասը չունի այլընտրանքային եկամտի աղբյուրներ, բացի գյուղատնտեսությունը: Կոոպերատիվները հնարավորություն են ստեղծում լուծելու գյուղացիական տնտեսությունների արտադրական, մատակարարման, իրացման, ինչպես նաև հողաբաժինների կտրտվածության, փոքրության, սահմանափակ ռեսուրսների և ենթակառուցվածքների և այլնի հետ կապված խնդիրները: Բացի այդ, ի թիվս այլոց, կոոպերատիվները նպաստում են գյուղատնտեսությունից ստացվող եկամուտների աճին, գիտելիքների և հմտությունների բարելավմանը, ֆինանսական ռեսուրսների հասանելիության բարելավմանը, աշխատատեղերի ստեղծմանը և ֆերմերների իրավունքների պաշտպանությանը:

Կոոպերատիվների սկզբունքները և արժեքները

Ի տարբերություն այլ ընկերակցությունների և ձեռնարկությունների, կոոպերատիվների ինքնությունը բնորոշվում է իրենց արժեքներով և սկզբունքներով: Կոոպերատիվների արժեքներն են՝ ինքնապատասխանատվությունը, ժողովրդավարությունը, իրավահավասարությունը, անաչառությունը, շահերի ընդհանրությունը, ինչպես նաև էթիկական և գաղափարական այնպիսի արժեքները, ինչպիսին են՝ ազնվությունը, անկեղծությունը, սոցիալական պատասխանատվությունը և այլոց մասին հոգատարությունը⁷:

Կոոպերատիվների միջազգայնորեն հռչակված յոթ սկզբունքներն են՝ (1) *կամավորությունը և բաց անդամակցությունը*, (2) *անդամների գործունեության ժողովրդավարական վերահսկողությունը*, (3) *անդամների տնտեսական մասնակցությունը*, (4) *ինքնավարությունը և անկախությունը*, (5) *կրթությունը, վերապատրաստումը և տեղեկատվությունը*, (6) *համագործակցությունը կոոպերատիվների միջև* և (7) *համայնքի մասին մտահոգվածությունը*⁸:

Կոոպերատիվների դասակարգումը

Կոոպերատիվները կարող են դասակարգվել կամ ըստ տիպերի, օրինակ՝ ծառայությունների, աշխատողների, սպառողների, կամ ըստ գործունեության բնույթի, օրինակ՝ գյուղատնտեսական, բնակարանային, տրանսպորտային, ֆինանսական, մատակարարման, մարքեթինգային և այլն, կամ ըստ մասնագիտությունների, օրինակ՝

⁶ Տե՛ս՝ Preamble, R193 - Promotion of Cooperatives Recommendation, 2002 (No. 193), Recommendation concerning Promotion of Cooperatives, Adoption: Geneva, 90th ILC session (20 Jun 2002) - Status: Up-to-date instrument, ILO:

⁷ Տե՛ս՝ նույն տեղում, 3-րդ հոդված:

⁸ Տե՛ս՝ նույն տեղում, 4-րդ հոդված:

ձկնորսների, գորգագործների, բուժաշխատողների, իրավաբանների և այլն, դրանք կարող են ծառայել մեկ նպատակի և/կամ մի քանի նպատակների, լինել բազմաշահառու և այլն 9:

Կոոպերատիվները և ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակները

Հարկ է նշել, որ կոոպերատիվները ճանաչվել են որպես Կայուն զարգացման նպատակների իրականացման գործիք¹⁰: Կոոպերատիվները կարող են նպաստել աշխատատեղերի ստեղծմանը, հատկապես կանանց համար ոչ ֆորմալ տնտեսության և գյուղատնտեսության ոլորտներում, նպաստել հավասարությանը և սոցիալական արդարությանը՝ խթանելով տնտեսական, քաղաքական, սոցիալական մասնակցությունը, նպաստել ձեռնարկատիրական, կառավարման և առաջնորդության հմտությունների զարգացմանը՝ երիտասարդների, կանանց և հաշմանդամություն ունեցող անձանց, ինչպես նաև խթանել բնական ռեսուրսների կայուն օգտագործումը և կառավարումը, շուկայի զարգացումը և այլն:

Կոոպերատիվները՝ սոցիալական տնտեսության սուբյեկտ

Կոոպերատիվները՝ ինչպես նաև հիմնադրամները, միավորումները, սոցիալական ձեռնարկությունները, համատեղ ձեռնարկությունները (mutuals/mutual societies), այսպես կոչված «սոցիալական տնտեսության» ձեռնարկության տեսակ են¹¹: Սոցիալական տնտեսության գաղափարը ճանաչվել է մի շարք երկրներում, ընդ որում որոշ երկրներում այն բավականին լայն տարածում ունի, օրինակ՝ Ֆրանսիայում, Իսպանիայում, Պորտուգալիայում, Հունաստանում, Բելգիայում և Իռլանդայում¹²: Վերջիններս տարբերվում են այլ տնտեսական ընկերակցություններից և ձեռնարկություններից իրենց առանձնահատկություններով՝ նպատակներով, կառավարման ձևով, որոշումների կայացման գործընթացով, ղեկավարող սկզբունքներով և այլն: Վերոգրյալ ձեռնարկությունները առաջնորդվում են մի շարք սկզբունքներով, այդ թվում՝ ***առաջնահերթությունը տրվում է անձին/անհատին և սոցիալական նպատակներին, այլ ոչ թե կապիտալին;*** կամավորությունը և բաց անդամակցությունը; անդամների գործունեության ժողովրդավարական վերահսկողությունը (այս մեկը չի վերաբերում հիմնադրամներին); անդամների ընդհանուր շահերը/հետաքրքրությունները; պատասխանատվության և անաչառության սկզբունքի պաշտպանությունը և կիրարկումը; ինքնավար կառավարումը և անկախությունը հանրային մարմիններից և ***ավելցուկի օգտագործումը ի օգուտ կայուն զարգացման նպատակների, անդամների շահերի կամ***

⁹ Sté u` p.- 59, Guidelines for Cooperative Legislation, 3rd revised revision, by H. Henry, ILO, Geneva, 2012:

¹⁰ Sté u` հետևյալ հղումը՝ https://www.ilo.org/global/topics/cooperatives/areas-of-work/WCMS_445131/lang--en/index.htm, ILO, 2019, Cooperatives and the Sustainable Development Goals: A contribution to the 2030 Agenda for Sustainable Development:

¹¹ Sté u` Conceptual Framework for the Purpose of Measurement of Cooperatives and its Operationalization, ILO, Geneva, May 2017, և Recent Evolutions of the Social Economy in the European Union, 2016, ինչպես նաև European Commission, Social Economy in the EU: https://ec.europa.eu/growth/sectors/social-economy_en, վերջին անգամ դիտվել է 03.02.2019:

¹² Sté u` p. 39, Table 5.1, National acceptance of the concept “Social Economy”, Report by CIRIEC on The Social Economy in the European Union, European Economic and Social Committee, European Union, 2012:

ընդհանուր շահերի: Այս առանձնահատկություններն ընդգծված են նաև մի շարք միջազգային փաստաթղթերով, մասնավորապես՝ Աշխատանքի միջազգային կազմակերպության¹³ (այսուհետ՝ ՄՄԿ) թիվ 193 հանձնարարկանով կոոպերատիվների առաջխաղացման վերաբերյալ, ինչպես նաև Միավորված ազգերի կազմակերպության¹⁴ (այսուհետ՝ ՄԱԿ) 2001թ. կոոպերատիվների զարգացման համար նպաստավոր միջավայրի ստեղծմանն ուղղված ուղեցույցով:

Կոոպերատիվների վերաբերյալ միջազգային և ներպետական օրենսդրությունը

Հարկ է նշել, որ արդարադատություն իրականացնելիս հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ ՀՀ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան¹⁵:

Միավորման ազատությունը ամրագրված է մի շարք միջազգային փաստաթղթերով, որոնց միացել կամ վավերացրել է Հայաստանի Հանրապետությունը, մասնավորապես, ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրով¹⁶, ՄԱԿ-ի Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրով¹⁷, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայով¹⁸, ինչպես նաև ՀՀ Սահմանադրությամբ¹⁹:

Միավորման ազատության իրավունքների «իրականացումը ենթակա չէ որևէ սահմանափակման, բացի նրանցից, որոնք նախատեսված են օրենքով եւ անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը կամ այլ անձանց իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու նպատակով:²⁰»

Հայաստանի Հանրապետությունում կոոպերատիվների ոլորտը կարգավորվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով և մի շարք այլ օրենսգրքերով և օրենքներով, որոնց կանդրադառնանք ավելի ուշ: Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ քաղ. օր.)²¹՝ կոոպերատիվ է համարվում քաղաքացիների և իրավաբանական անձանց

¹³ Հայաստանի Հանրապետությունը անդամակցել է ՄԱԿ-ին 1996թ. նոյեմբերի 26-ին:

¹⁴ Հայաստանի Հանրապետությունը անդամակցել է ՄԱԿ-ին 1992թ. մարտի 2-ին և վավերացրել է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան (այսուհետ՝ ՄԻԵԿ) 2002թ. ապրիլի 26-ին:

¹⁵ Տե՛ս՝ ՀՀ դատական օրենսգիրքի (ՀՀ սահմանադրական օրենք, ՀՕ-95-Ն), 6-րդ հոդվածի 2-րդ մաս: Օրենսգիրքն ընդունվել է 2018 թվականի փետրվարի 7-ին, 2018 թվականի ապրիլի 9-ին:

¹⁶ Տե՛ս՝ 20-րդ հոդվածը:

¹⁷ Տե՛ս՝ 22-րդ հոդվածը:

¹⁸ Տե՛ս՝ 11-րդ հոդվածը:

¹⁹ Տե՛ս՝ ՀՀ Սահմանադրության 45-րդ հոդվածը (1995 թվականի հուլիսի 5-ի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը՝ 2005 թվականի փոփոխություններով):

²⁰ Տե՛ս՝ ՄԻԵԿ-ի 11-րդ հոդվածը:

²¹ Տե՛ս՝ ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, ՀՕ-239, ընդունվել է Ազգային ժողովի կողմից 1998 թվականի մայիսի 5-ին, վերջին անգամ փոփոխվել է 2018 թվականի հոկտեմբերի 24-ին:

անդամության վրա հիմնված ու իր անդամների գույքային փայավճարների միավորման միջոցով մասնակիցների նյութական և այլ կարիքների բավարարման նպատակով ստեղծված կամավոր միավորումը²²: ***Կոոպերատիվները՝ կախված իրենց գործունեության բնույթից, կարող են լինել շահույթ ստանալու նպատակ հետապնդող (առևտրային) կամ նման նպատակ չհետապնդող (ոչ առևտրային) կազմակերպություններ***²³:

Վերջին տարիների ընթացքում նոր գրանցվող գյուղատնտեսական կոոպերատիվների թիվը գնալով նվազում է՝ 2016 թվականին գրանցվել են թվով 54, 2017 թվականին՝ թվով 14, 2018 թվականին՝ թվով 7 գյուղատնտեսական կոոպերատիվներ²⁴, ընդ որում, գրանցված 75 գյուղատնտեսական կոոպերատիվներից փաստացի գործում են 34-ը: Չնայած այն հանգամանքին, որ գյուղատնտեսական կոոպերատիվների զարգացումը կառավարության գերակա խնդիրներից մեկն է, պետության կողմից որդեգրած և իրականացվող ներկայիս քաղաքականությունը չի արտացոլում կոոպերատիվների և կոոպերատիվ շարժման առանձնահատուկ բնույթը, և ինչի արդյունքում հանրապետությունում ձևավորվել է կոոպերատիվների գործունեության համար ոչ բարենպաստ միջավայր: Այս մոտեցումը բացասաբար է ազդում կոոպերատիվների գործունեության վրա:

Ուսումնասիրությունները և փորձագետների հետ իրականացված հարցազրույցների արդյունքները ցույց են տալիս, որ ներկայիս ՀՀ քաղ. օր. կարգավորումները բավարար չեն կոոպերատիվների զարգացման և գործունեության խթանման համար: **ՀՀ քաղ. օր. լիովին չի արտացոլում կոոպերատիվների առանձնահատկությունները, նրանց արժեքները և սկզբունքները և չի համապատասխանում վերոգրյալ միջազային չափորոշիչներին:** Անորոշ կարգավորումները և բացերը, ինչպես նաև այնպիսի ընթացակարգերը, որոնք պահանջում են օրենսդրական կարգավորում, խոչընդոտեն հանդիսանան միավորումների ազատության իրավունքի իրացման համար և չեն համապատասխանեն համաչափության և որոշակիության սահմանադրական սկզբունքներին²⁵: Ուստի, անհրաժեշտություն է առաջանում վերանայել ՀՀ քաղ. օր. (կոոպերատիվների իրավահարաբերությունները կարգավորող նորմերը) կամ ընդունել մեկ ամբողջական և համապարփակ օրենք կոոպերատիվների մասին, որը կկարգավորի առնվազն հետևյալ իրավահարաբերությունները կապված՝ կոոպերատիվների դասակարգման, կոոպերատիվի ձևավորման, կոոպերատիվին անդամակցության (ընդունելը, հեռացնելը,

²² Տե՛ս՝ ՀՀ քաղաքացիական օրենսգիրքի 117 –րդ հոդվածի 1-ին մաս:

²³ Տե՛ս՝ նույն տեղում, 51-րդ հոդվածի 3-րդ մաս:

²⁴ Համաձայն ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից 2019 թ. հունվարի 24-ին տրամադրված տվյալների:

²⁵ Տե՛ս՝ ՀՀ Սահմանադրական դատարանի 2008 թ. մայիսի 13-ի թիվ 753 որոշումը, 9-րդ կետ. «... Իրավական պետության սկզբունքը, ի թիվս այլոց, պահանջում է նաև իրավական օրենքի առկայություն: Վերջինս պետք է լինի բավականաչափ մատչելի՝ իրավունքի սուբյեկտները պետք է համապատասխան հանգամանքներում հնարավորություն ունենան կողմնորոշվելու, թե տվյալ դեպքում ինչ իրավական նորմեր են կիրառվում: Նորմը չի կարող համարվել «օրենք», եթե այն ձևակերպված չէ բավարար ճշգրտությամբ, որը թույլ կտա իրավաբանական և ֆիզիկական անձանց դրան համապատասխանեցնել իրենց վարքագիծը. նրանք պետք է հնարավորություն ունենան կանխատեսել այն հետևանքները, որոնք կարող է առաջացնել տվյալ գործողությունը»:

դադարեցնելը, հրաժարվելը), անդամների պարտավորությունների և իրավունքների, որոշումների կայացման/ քվեարկության, պահուստային ֆոնդի ձևավորման, վերստուգողին վերստուգիչ հանձնաժողովի, անդամների և ոչ անդամների հետ գործարքների և դրանց տարբերությունների՝ ավելցուկի և շահույթի բաշխման, ինչպես նաև լուծարման, վեճերի լուծման, կոոպերատիվների միությունների, պետական մարմինների հետ փոխհարաբերությունները և այլն :

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը²⁶ «Sidiropoulos & Others v. Greece»²⁷ գործով նշել է, որ «Միավորումներ ստեղծելու իրավունքը՝ միավորումների ազատության իրավունքի անկապտելի մասն է: Քաղաքացիները պետք է կարողանան հիմնել իրավաբանական անձ, որպեսզի կարողանան համատեղ գործել իրենց ընդհանուր հետաքրքրությունների շրջանակներում, այն միավորումների ազատության իրավունքի ամենակարևոր բաղադրիչներից է, առանց որի այդ իրավունքն կորցնում է իր իմաստը:»²⁸ Քանզի կոոպերատիվի սահմանումը բավարարում է միավորուման վերոգրյալ հատկանիշներին, ապա ՄԻԵԿ-ի հավաքների և միավորման ազատության 11-րդ հոդվածն ընդգրկում է կոոպերատիվները: **Վերոգրյալ օրենսդրական բացերը և ոչ լիարժեք կարգավորումները խոչընդոտ են հանդիսանում որոշակիության սկզբունքի տեսանկյունից: Անորոշ իրավակարգավորման արդյունքում անձինք կարող են զրկվել միավորումների իրենց իրավունքն իրացնելու հնարավորությունից, ինչը կարող է հանգեցնել կոնվենցիայի խախտման:**

Ի հավելումն վերոգրյալի, ՀՀ Սահմանադրության համաձայն, միավորումների ստեղծման և գործունեության կարգը սահմանվում է օրենքով²⁹, ինչպես նաև հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս օրենքներն են սահմանում այդ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգերը և ընթացակարգերը: Բացի այդ, անձի տնտեսական, ներառյալ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքի իրականացման պայմանները և կարգը նույնպես սահմանվում են օրենքով³⁰: Հետևաբար, **կոոպերատիվների կանոնադրությամբ չեն կարող կարգավորվել այնպիսի կառուցակարգեր և ընթացակարգեր, որոնք պահանջում են օրենսդրական կարգավորում:**

Այսպիսով, առաջնային անհրաժեշտություն է առաջանում վերանայել գործող ՀՀ քաղ. օր-ը՝ հաշվի առնելով ՀՀ Սահմանադրությունը և պետության կողմից ստանձնած պարտավորությունները: ԱՄԿ-ի Կոոպերատիվների մասին օրենսդրական ուղեցույցն³¹ առաջարկում է բոլոր տեսակի կոոպերատիվների համար **ընդունել մեկ ամբողջական և համապարփակ օրենք, որը կկարգավորի առնվազն հետևյալ հարաբերությունները կապված կոոպերատիվի ձևավորման, գրանցման, անդամակցության, կոոպերատիվի կառուցվածքի, կառավարման մարմնի, գույքի ձևավորման, փայի, վերստուգիչ և**

²⁶ Հայաստանի Հանրապետությունը անդամակցել է Եվրոպայի Խորհրդին 2001թ. հունվարի 25-ին:

²⁷ para. 40, Case of Sidiropoulos and Others v. Greece (57/1997/841/1047) 10 July 1998, ECHR.

²⁸ Տե՛ս՝ ՄԻԵԿ-ի 11-րդ հոդվածը:

²⁹ Տե՛ս՝ ՀՀ Սահմանադրության 45-րդ հոդվածի 2-րդ մասը 75-րդ հոդվածները:

³⁰ Տե՛ս՝ ՀՀ Սահմանադրության 59-րդ հոդվածը:

³¹ Տե՛ս՝ Guidelines for Cooperative Legislation, 3rd revised revision, by H. Henry, ILO, Geneva, 2012:

վերստուգող հանձնաժողովի, ավելցուկի և շահույթի բաշխման, լուծարման, վեճերի լուծման և այլն:

Հարցազրույցների մասնակիցները նշեցին նաև կոռուպցիոն և կոռուպցիոն կանոնադրության հետ կապված խնդիրներ, մասնավորապես, այն որ կոռուպցիոնները՝ անկախ իրենց գործունեության բնույթից կամ տիպից, կիրառում են նույն կանոնադրության տիպային նմուշը: Նշվեց նաև այն, որ անգամ գրանցման պահին չի հստակեցվում թե արդյոք տվյալ գյուղատնտեսական կոռուպցիոնը շահույթ ստանալու նպատակ հետապնդող կամ նման նպատակ չհետապնդող կազմակերպություն է: **Հետևաբար, կոռուպցիոնների դասակարգումը հստակեցնելուց հետո, անհրաժեշտ է կոռուպցիոնների առանձին տեսակների համար մշակել տիպային կանոնադրություն՝ հաշվի առնելով նրանց առանձնահատկությունները:**

Ինչ վերաբերում է «Սպառողական կոռուպցիայի մասին» ՀՀ օրենքին, ապա այս օրենքն ընդունվել է դեռևս 1993 թ-ին և ժամանակի ընթացքում էական փոփոխությունների է ենթարկվել³²: Ինչպես և նախորդ դեպքում (տես ՀՀ քաղ. օր.-ի վերլուծությունը), **օրենքը հստակեցման և լրամշակման կարիք ունի**: Անհրաժեշտ է վերանայել նաև օրենքի վերնագիրը, քանի որ օրենքի կարգավորման հիմնական առարկան հանդիսանում են սպառողական կոռուպցիոնները:

Ի տարբերություն «Գյուղատնտեսական կոռուպցիոնների մասին» ՀՀ օրենքի, «Սպառողական կոռուպցիայի մասին» ՀՀ օրենքը հստակ սահմանում է, որ սպառողական կոռուպցիոնները շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպություններ են: 2016թ. ՀՀ քաղ. օր-ում կատարված փոփոխությունների համաձայն, ոչ առևտրային կազմակերպությունը կարող է իր կանոնադրությամբ սահմանված նպատակներին համապատասխան իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն, եթե դա նախատեսված է օրենքով³³: Սակայն, այս փոփոխությունը չի ամրագրվել «Սպառողական կոռուպցիայի մասին» ՀՀ օրենքով, **հետևաբար անհրաժեշտ է վերոգրյալ օրենքով նախատեսել կազմակերպության ձեռնարկատիրական գործունեությունը:**

«Գյուղատնտեսական կոռուպցիոնների մասին» ՀՀ օրենքը³⁴ մշակվել է հիմք ընդունելով ԱՄԿ-ի վերոգրյալ հանձնարարականը, ԱՄԿ-ի Կոռուպցիոնների օրենսդրության մշակման վերաբերյալ ուղեցույցը, ինչպես նաև միջազգային փորձը: Հարցազրույցների մասնակիցները հիմնականում գոհունակություն արտահայտեցին օրենքի ընդունման հետ կապված: Սակայն, մասնակիցները նշեցին, որ անհասկանալի է կոռուպցիոնների տարանջատումը, քանի որ գյուղատնտեսական կոռուպցիոնները երբեմն կարող են դիտվել որպես սպառողական կոռուպցիոններ: Պարզ չէ թե ներպետական օրենսդրությունը ինչ սկզբունքով է առաջնորդվում և ինչպես է դասակարգում կոռուպցիոնները: **Հետևաբար, անհրաժեշտություն է առաջանում, որպեսզի**

³² Վերջին անգամ փոփոխվել է 2016 թվականի դեկտեմբերի 16-ին:

³³ Տե՛ս՝ ՀՀ քաղ. օր. 52-րդ հոդվածի 2-րդ մասը:

³⁴ Ընդունվել է 2015 թվականի դեկտեմբերի 21-ին, ուժի մեջ է մտել 2016 թվականի հունվարի 9-ին:

ներպետական օրենսդրությամբ սահմանվի կոոպերատիվների դասակարգումը և դրանց առանձնահատկությունները:

Մասնակիցները նշեցին նաև, որ թեև «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» ՀՀ օրենքի ընդունումը քայլ առաջ էր, այնուամենայնիվ, էական արդյունքների հասնելու համար **անհրաժեշտ էր փոփոխություններ կատարել նաև ավելի բարձր իրավական ակտերում՝ ՀՀ քաղ. օր-ում և ՀՀ հարկային օրենսգրքում, ինչպես նաև մի շարք այլ հարակից օրենքներում:**

Հարկային քաղաքականություն

Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կոոպերատիվների առանձնահատկություններից էլնելով, կոոպերատիվների համար սահմանված են որոշ արտոնություններ: *«Եվրամիության գրեթե բոլոր երկրներում սոցիալական տնտեսության ձեռնարկությունների և կազմակերպությունների համար գոյություն ունի հատուկ հարկային մոտեցում/ռեժիմ:* Այս հատուկ մոտեցման ընդդիմախոսները երկար ժամանակ փորձում էին ապացուցել, որ նման մոտեցումը կարող է համարվել անհավասար վերաբերմունք, որն իրենից ներկայացնում է ազատ մրցակցության կանոններին հակաիրավական պետական միջամտություն: 2011թ –ին, Եվրոպական միության արդարադատության դատարանն այս հարցի վերաբերյալ կայացրեց հետևյալ որոշումը³⁵, որ տվյալ հարկային հատուկ մոտեցումը արդարացված է, քանի որ սոցիալական տնտեսության սուբյեկտները, մասնավորապես կոոպերատիվները, իրենց բնույթով տարբեր են շահույթ ստանալու նպատակ հետապնդող այլ */կոմերցիոն/* կազմակերպություններից: Անհրաժեշտ է օրենսդրորեն ճանաչել սոցիալական տնտեսության սուբյեկտները՝ ձեռնարկությունների տարբեր տեսակների զգալի տարբերություններն ընդգծելու համար³⁶»: Ինչ վերաբերում է «շահույթ ստանալու նպատակ հետապնդելուն» կամ նման նպատակ «չհետապնդելուն», ապա հարցն այստեղ պետք է դիտել ավելի լայն շրջանակներում: Այսինքն, հարցն այստեղ այն է, թե շահույթ ստանալն ինչ նպատակ է հետապնդում: Արդյոք շահույթ հետապնդելը/կապիտալի ստացումը՝ գործունեության միակ նպատակն է, թե շահույթ հետապնդելը միջոց է ձեռնարկության շահառուների վիճակի բարելավման կամ ավելի լայն սոցիալական խնդիրների լուծման համար³⁷:

Սակայն, ներպետական օրենսդրությամբ նման կարգավորումներ նախատեսված չեն: Հարցազրույցների մասնակիցները բարձրաձայնեցին մի շարք խնդիրներ, հիմնականում հարկային քաղաքականության հետ կապված: Հարկային դաշտում առկա խնդիրների պատճառով, կոոպերատիվների մեծ մասը նախընտրում են կասեցնել իրենց գործունեությունը:

³⁵Sté u` para. 67, C-78/08 - Paint Graphos and Others, ECJ, 2011:

³⁶Sté u` Recent evolutions of the Social Economy in the European Union, 2016:

³⁷Sté u` p. 35, Guidelines for Cooperative Legislation, 3rd revised revision, by H. Henry, ILO, Geneva, 2012:

ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված չեն կոոպերատիվի շահույթի³⁸ և կոոպերատիվի ավելցուկի³⁹ տարբերությունը, և հստակ չէ թե արդյոք, կոոպերատիվ ավելցուկից անբաժանելի պահուստային ֆոնդին տրված հատկացումները և անդամներին տրված կոոպերատիվ փոխհատուցումները ենթակա են հարկման շահութահարկով, թե՛ ոչ: Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կոոպերատիվի ավելցուկը, որպես կանոն, հարկման ենթակա չէ⁴⁰: Հետևաբար, **անհրաժեշտ է ՀՀ հարկային օրենսգրքով տարբերակել կոոպերատիվի ավելցուկի և կոոպերատիվի շահույթի սահմանումները և սահմանել, որ կոոպերատիվի ավելցուկը չի հարկվում շահութահարկով:**

Հարցազրույցների մասնակիցները բարձրաձայնեցին նաև ավելացված արժեքի (այսուհետ՝ ԱԱՀ) հետ կապված խնդիրներ: ՀՀ հարկային օրենսգրքի համաձայն՝ 2019 թվականի հունվարի 1-ից ԱԱՀ-ի շեմը տարեկան կտրվածքով 115 միլիոն դրամից նվազել է մինչև 58.35 միլիոն դրամ⁴¹: **Շեմի իջեցումը բացասաբար է ազդում հատկապես գյուղատնտեսական կոոպերատիվների վրա, քանի որ կոոպերատիվների առանձնահատկությունը հաշվի չէին առնված և նրանք հայտնվում էին անհավասար պայմաններում որպես անհատ ձեռնարկատեր հաշվառված ֆիզիկական անձի հետ համեմատ:** Թե հարցազրույցների ընթացքում, թե 2019թ. հունվարին ներկայացված «ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի համաձայն, այդ դրույթը ենթակա է փոփոխության, սակայն, պարզ չէ թե նախագիծը երբ կընդունվի և նախագծով նախատեսված նոր կարգավորումները ինչ խնդիրներ առաջ կբաշեն:

Հատկանշական է, որ ՀՀ հարկային օրենսգրքի 64-րդ հոդվածը սահմանում է ավելացված արժեքի հարկից ազատված գործարքներն ու գործառնությունները, սակայն, կոոպերատիվները ներառված չեն այդ ցանկում: Մինչդեռ «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» ՀՀ օրենքի համաձայն⁴² կոոպերատիվի վերակազմակերպման, ինչպես նաև լուծարման դեպքում կոոպերատիվի անբաժանելի ֆոնդն ընդհանուր ժողովի որոշմամբ հատկացվում է նաև համայնքի զարգացմանը:

ԱՄԿ-ի թիվ 193 հանձնարականի համաձայն, **կոոպերատիվների համար անհրաժեշտ է ստեղծել ոչ պակաս նպաստավոր միջավայր, քան այլ ձեռնարկությունների և սոցիալական կազմակերպությունների դեպքում:** Կառավարությունները անհրաժեշտության դեպքում պետք է ձեռնարկեն կոոպերատիվ գործունեության աջակցության այնպիսի միջոցառումներ, որոնք կբավարարեն հատուկ սոցիալական և հանրային քաղաքականության նախանշված արդյունքները, ինչպիսիք են՝ զբաղվածության խթանումը կամ այնպիսի գործունեության զարգացումը, որն օգտակար

³⁸ Կոոպերատիվ արտաքին գործարքների հասույթի և ծախսերի դրական տարբերություն, «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածը:

³⁹ Կոոպերատիվ ներքին գործարքների հասույթի և ծախսերի դրական տարբերություն, նույն տեղում:

⁴⁰ Sté u` p.- 64, Guidelines for Cooperative Legislation, 3rd revised revision, by H. Henry, ILO, Geneva, 2012:

⁴¹ Sté u` ՀՀ հարկային օրենսգրքի 59-րդ հոդվածը:

⁴² Sté u` 25-րդ և 26-րդ հոդվածները:

կլինի խոցելի խմբերին կամ տարածաշրջաններին: Այդպիսի միջոցառումները, հնարավորության սահմաններում, կարող են ներառել հարկային արտոնություններ, վարկեր, դրամաշնորհներ, հանրային աշխատանքային ծրագրերին մասնակցելու հնարավորություն և պետական գնումների գործընթացում որոշակի առավելությունների կամ արտոնություններ:

Թեև «ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով նախատեսվում են մի շարք բարեփոխումներ, սակայն, կոռպերատիվները դիտվում են միայն որպես փոքր և միջին ձեռնարկատիրություններ և նրանց առանձնահատկությունները հաշվի չեն առնված: Մինչդեռ կոռպերատիվների համար տարբերակված հարկային քաղաքականություն որդեգրելը բխում է ՀՀ Սահմանադրությունից և պետության ստանձնած պարտավորություններից, այդ թվում համահունչ է ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրին:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Մշակել և ընդունել այնպիսի քաղաքականություն, որը կարտացոլի կոռպերատիվների և կոռպերատիվ շարժման առանձնահատուկ բնույթը:
2. Վերանայել ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը (կոռպերատիվների իրավահարաբերությունները կարգավորող նորմերը) կամ ընդունել մեկ ամբողջական և համապարփակ օրենք կոռպերատիվների մասին, որպեսզի անորոշ կարգավորումները և բացերը, ինչպես նաև այնպիսի ընթացակարգերը, որոնք պահանջում են օրենսդրական կարգավորում, խոչընդոտ չհանդիսանան միավորումների ազատության իրավունքի իրացման համար և համապատասխանեն համաչափության և որոշակիության սահմանադրական սկզբունքներին, և որոնք կարտացոլեն կոռպերատիվների սկզբունքները և արժեքները, նրանց առանձնահատուկ բնույթը և կկարգավորեն առնվազն հետևյալ իրավահարաբերությունները կապված՝ կոռպերատիվի ձևավորման, գրանցման, անդամակցության, կոռպերատիվի կառուցվածքի, կառավարման մարմնի, գույքի ձևավորման, փայի, վերստուգողի և վերստուգիչ հանձնաժողովի, ավելցուկի և շահույթի բաշխման, լուծարման, վեճերի լուծման և այլն:
3. Նախատեսել կոռպերատիվների դասակարգումը կամ ըստ տիպերի, կամ ըստ գործունեության բնույթի, կամ ըստ մասնագիտությունների, կամ որդեգրել այն մոտեցումը, որ նրանք կարող են ծառայել մեկ նպատակի և/կամ մի քանի նպատակների, լինել բազմաշահառու և այլն:
4. Մշակել նոր տիպային կանոնադրություններ՝ ըստ կոռպերատիվների տեսակների:
5. Լրացումներ կատարել «Գյուղատնտեսական կոռպերատիվների մասին» ՀՀ օրենքում (իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև այլ իրավական ակտերում) և շահույթ ստանալու նպատակ հետապնդող կոռպերատիվների համար նախատեսել ձեռնարկատիրական գործունեության հնարավորություն, որը կտարբերվի *այլ առևտրային* կազմակերպությունների կարգավիճակից և կհամատասխանի կոռպերատիվների առանձնահատուկ բնույթին:
6. Որդեգրել այնպիսի հարկային քաղաքականություն, որը հաշվի կառնի այն հանգամանքը, որ կոռպերատիվներն իրենց բնույթով տարբեր են շահույթ ստանալու նպատակ հետապնդող այլ (*առևտրային*) ընկերակցություններից և

ձեռնարկություններից: Նման մոտեցումը չի կարող դիտվել որպես անհավասար պայման և արդարացված է այն պատճառաբանությամբ, որ շահույթ ստանալու նպատակ հետապնդելը կոռուպցիոնների դեպքում միջոց է ձեռնարկության շահառուների վիճակի բարելավման կամ ավելի լայն (համայնքի կամ խոցելի խմբերի) տնտեսական կամ սոցիալական խնդիրների լուծման համար, քան բացառապես կապիտալի ավելացումը⁴³:

7. Վերանայել գործող ՀՀ հարկային օրենսգիրքը և կոռուպցիոնների համար ստեղծել ոչ պակաս նպաստավոր միջավայր, քան այլ ձեռնարկությունների և սոցիալական կազմակերպությունների դեպքում:
8. Վերանայել ՀՀ հարկային օրենսգրքով (59-րդ հոդվածը) սահմանված ԱԱՀ շեմը՝ հաշվի առնելով կոռուպցիոնների առանձնահատկությունները, քանի որ գործող նորմը հատկապես բացասաբար է ազդում գյուղատնտեսական կոռուպցիոնների վրա և վերջիններս հայտնվում են անհավասար պայմաններում, որպես անհատ ձեռնարկատեր հաշվառված ֆիզիկական անձի համեմատությամբ:
9. Ավելացնել կոռուպցիոնների կողմից իրականացվող որոշ գործարքները (ՀՀ հարկային օր. 64-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետի նպատակներին համապատասխան) ավելացված արժեքի հարկից ազատված գործարքների ցանկին:
10. Վերանայել ՀՀ հարկային օր. 126-րդ հոդվածը և հնարավորություն ընձեռել շահութահարկի վճարումից ազատել նաև գուղատնտեսական կոռուպցիոններին, որոնք զբաղվում են իրենց անդամների կողմից արտադրած գյուղատնտեսական արտադրանքի վաճառքով:
11. ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված չեն կոռուպցիոնների շահույթի և կոռուպցիոնի ավելցուկի տարբերությունը, և հստակ չէ, թե արդյոք, կոռուպցիոն ավելցուկից անբաժանելի պահուստային ֆոնդին տրված հատկացումները և անդամներին տրված կոռուպցիոնի փոխհատուցումները ենթակա են հարկման շահութահարկով, թե՛ ոչ: Ուստի, անհրաժեշտ է տարբերակել կոռուպցիոնի ավելցուկի և կոռուպցիոնի շահույթի սահմանումները և սահմանել, որ կոռուպցիոնի ավելցուկը չի հարկվում շահութահարկով:

⁴³ Տե՛ս՝ ՄԱԿ-ի 2001թ. Կոռուպցիոնների զարգացման համար նպատակավոր միջավայրի ստեղծմանն ուղղված ուղեցույցը, Աշխատանքի միջազգային կազմակերպության 2001թ. թիվ 193՝ Կոռուպցիոնների խթանման վերաբերյալ հանձնարարկանը, նաև C-78/08 - *Paint Graphos and Others, ECJ, 2011*:

Գյուղատնտեսական կոոպերատիվներին պետական աջակցության ծրագիր

Աշխատանքի միջազային կազմակերպության թիվ 193 հանձնարարականը՝ կոոպերատիվների խթանման վերաբերյալ

ԱՄԿ-ի թիվ 193 հանձնարարականը կոչ է անում կառավարություններին *ճանաչել կոոպերատիվների և դրանց կազմակերպությունների դերը՝ մշակելով համապատասխան գործիքներ, որոնց նպատակն է ազգային և տեղական մակարդակներում ստեղծել և ամրապնդել կոոպերատիվները*⁴⁴։ Կոոպերատիվների խթանման համար պետական քաղաքականության իրականացման համար, ԱՄԿ-ն խրախուսում է կառավարություններին *ոլորացնել կոոպերատիվների համար աջակցող ծառայությունների մատչելիությունը, որպեսզի ուժեղացնեն դրանց գործարար կենսունակությունը և աշխատանք և եկամուտ ստեղծելու կարողությունները*։ Այդ թվում, առաջարկվում է, որպեսզի այդ ծառայությունները ներառեն՝ (ա) մարդկային ռեսուրսների զարգացման ծրագրեր, (բ) հետազոտական և կառավարման վերաբերյալ խորհրդատվական ծառայություններ, (գ) ֆինանսների և ներդրումների մատչելիությունը, (դ) հաշվապահական և աուդիտորական ծառայություններ, (ե) կառավարման գծով տեղեկատվական ծառայություններ, (զ) տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի ծառայություններ, (է) խորհրդատվական ծառայություններ տեխնոլոգիայի և նորարարության մասին, (ը) իրավաբանական և հարկային ծառայություններ, (թ) մարքեթինգի աջակցության ծառայություններ, և (ժ) անհրաժեշտության դեպքում այլ օժանդակ ծառայություններ⁴⁵, ինչպես նաև ներառել հատուկ դրույթներ անահապահով խմբերի համար⁴⁶։ Այն նաև կոչ է անում ոլորացնել կոոպերատիվների համար ներդրումային ֆինանսների և վարկերի մատչելիությունը⁴⁷, ինչպես նաև խրախուսել տեխնիկական, առևտրային և ֆինանսական կապերի զարգացմանը կոոպերատիվների բոլոր ձևերի միջև⁴⁸։

Բացի այդ, պետական քաղաքականությունը պետք է նպաստի սահմանված աշխատանքի հիմնարար չափորոշիչներին և սկզբունքների, խթանի գենդերային հավասարությունը կոոպերատիվներում և դրանց աշխատանքում, զարգացնի տեխնիկական և մասնագիտական հմտությունները, ձեռնարկատիրական և կառավարչական ունակությունները, գործարար կառավարումը, ընդհանուր քաղաքականության հմտությունները, նպաստի կոոպերատիվների սկզբունքների և գործելակերպի վերաբերյալ կրթությանն ու ուսուցմանը, ապահովի վերապատրաստման և աջակցության այլ ձևեր, կոոպերատիվների համար մատչելի դարձնի վարկային

⁴⁴ Տե՛ս՝ ԱՄԿ-ի թիվ 193 հանձնարարականը՝ կոոպերատիվների խթանման վերաբերյալ, կետ. 11։

⁴⁵ Տե՛ս՝ նույն տեղում, կետ 11։

⁴⁶ Տե՛ս՝ նույն տեղում, կետ 12։

⁴⁷ Մասնավորապես՝ (ա) թույլ տան առաջարկել վարկեր և ֆինանսական այլ հնարավորություններ, (բ) պարզեցնեն վարչական ընթացակարգերը, առողջացնեն կոոպերատիվի միջոցների հնարավոր անհամարժեք մակարդակները և կրճատեն վարկային գործարքների ծախսերը, (գ) նպաստեն կոոպերատիվների ֆինանսավորման համար ինքնավար համակարգի ձևավորմանը, ներառյալ խնայողական, վարկային, բանկային և ապահովագրական կոոպերատիվները։

⁴⁸ Տե՛ս՝ ԱՄԿ-ի թիվ 193 հանձնարարականը՝ կոոպերատիվների խթանման վերաբերյալ, կետ 13։

ռեսուրսները, մատչելի դարձնի կոոպերատիվների մուտքը շուկա, նպաստի կոոպերատիվների մասին տեղեկատվության տարածմանը, և ձգտի բարելավել ազգային վիճակագրությունը կոոպերատիվների մասին⁴⁹:

ՀՀ Սահմանադրություն

ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի համաձայն՝ տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներն են՝ ի թիվս այլոց, գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը, բնակչության զբաղվածության խթանումը և աշխատանքի պայմանների բարելավումը, կանանց և տղամարդկանց միջև փաստացի հավասարության խթանումը, հասարակական կյանքին հաշմանդամների մասնակցության խթանումը, սպառողների շահերի պաշտպանությունը, ապրանքների, ծառայությունների և աշխատանքների որակի նկատմամբ վերահսկողությունը, տարածքային համաչափ զարգացումը, քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքին երիտասարդության մասնակցության խթանումը: Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն իրենց իրավասությունների և հնարավորությունների շրջանակում պարտավոր են իրագործել Սահմանադրության 86-րդ հոդվածով սահմանված նպատակները⁵⁰: Ընդ որում, յուրաքանչյուր տարվա համար Կառավարությունը զեկույց է ներկայացնում Ազգային ժողով իր ծրագրի կատարման ընթացքի և արդյունքների մասին, այդ թվում Սահմանադրության 86-րդ հոդվածով սահմանված նպատակների իրագործման վերաբերյալ⁵¹:

Կոոպերատիվները՝ որպես փոքր և միջին ձեռնարկատիրություն

Համաձայն ԱՄԿ-ի, կոոպերատիվները դիտվում են որպես փոքր և միջին ձեռնարկատիրության (այսուհետ՝ ՓՄՁ) սուբյեկտ⁵², թեև ՓՄՁ-ներ սահմանումները տարբեր են երկրից երկիր, սակայն, դրանք սովորաբար հիմնված են աշխատողների թվի, տարեկան շրջանառության կամ ձեռնարկության ակտիվների արժեքիների հիման վրա: Սովորաբար, գերփոքր ձեռնարկատիրությունը սահմանվում է որպես մինչև 10 աշխատող, փոքր ձեռնարկատիրությունը՝ 10-100 աշխատող, և միջին ձեռնարկատիրությունը՝ 100-ից-250 աշխատողներ ունեցող ձեռնարկություն: Այն ներառում է ձեռնարկությունների բոլոր տեսակները՝ անկախ նրանց կազմակերպարարական ձևից (օրինակ՝ ընտանեկան ձեռնարկատիրություններ, անհատ ձեռնարկատերեր կամ կոոպերատիվներ) կամ դրանց ֆորմալ կամ ոչ ֆորմալ լինելուց:

⁴⁹ Տե՛ս՝ նույն տեղում, կետ 8:

⁵⁰ Տե՛ս՝ ՀՀ Սահմանադրության 87 –րդ հոդվածի 1-ին մաս:

⁵¹ Տե՛ս՝ ՀՀ Սահմանադրության 87 –րդ հոդվածի 2-րդ մաս, 156-րդ հոդված:

⁵² Տե՛ս՝ , https://www.ilo.org/wcmsp5/groups/public/---ed_norm/---relconf/documents/meetingdocument/wcms_358294.pdf, ինչպես նաև R189 - Job Creation in Small and Medium-Sized Enterprises Recommendation, 1998 (No. 189), Recommendation concerning General Conditions to stimulate Job Creation in Small and Medium-Sized Enterprises, Adoption: Geneva, 86th ILC session (17 Jun 1998) - Status: Up-to-date instrument, https://www.ilo.org/dyn/normlex/en/f?p=NORMLEXPUB:12100:0::NO::P12100_ILO_CODE:R189:

Հայաստանի Հանրապետությունում ՓՄՁ սուբյեկտները դասակարգվում են հետևյալ կերպ՝

- 1) գերփոքր՝ առևտրային կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր, որոնց աշխատողների միջին ցուցակային թվաքանակը կազմում է մինչև 10 մարդ, իսկ նախորդ տարվա գործունեությունից ստացված հասույթը կամ նախորդ տարեվերջի դրությամբ ակտիվների հաշվեկշռային արժեքը չի գերազանցում 100 մլն դրամը.
- 2) փոքր՝ առևտրային կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր, որոնց աշխատողների միջին ցուցակային թվաքանակը կազմում է մինչև 50 մարդ, իսկ նախորդ տարվա գործունեությունից ստացված հասույթը կամ նախորդ տարեվերջի դրությամբ ակտիվների հաշվեկշռային արժեքը չի գերազանցում 500 մլն դրամը.
- 3) միջին՝ առևտրային կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր, որոնց աշխատողների միջին ցուցակային թվաքանակը կազմում է մինչև 250 մարդ, իսկ նախորդ տարվա գործունեությունից ստացված հասույթը կամ նախորդ տարեվերջի դրությամբ ակտիվների հաշվեկշռային արժեքը չեն գերազանցում համապատասխանաբար 1500 մլն դրամը և 1000 մլն դրամը⁵³:

Այսպիսով, շահույթ ստանալու նպատակ հետապնդող կոոպերատիվները, որոնք համապատասխանում են վերոնշյալ պահանջներին, կարող են հանդիսանալ ՓՄՁ սուբյեկտ:

ՓՄՁ ոլորտը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության տնտեսության գերական ուղղություններից մեկը: ՓՄՁ-ի պետական աջակցության հիմնական ուղղություններն են՝ իրավական բարենպաստ դաշտի ձևավորումը, ֆինանսական և ներդրումային աջակցությունը, երաշխիքների տրամադրումը, աջակցող ենթակառուցվածքների ստեղծմանը ու զարգացմանը նպաստելը, տեղեկատվական և խորհրդատվական օգնությունը, արտաքին տնտեսական գործունեության խթանումը, նորարարական գործունեության և ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման աջակցությունը, բարենպաստ հարկային քաղաքականության իրականացումը, կադրերի պատրաստումը և վերապատրաստումը, վիճակագրական հաշվետվությունների և հաշվապահական հաշվառման պարզեցված համակարգերի ստեղծումը, և պետական գնումների իրականացման գործընթացում աջակցությունը⁵⁴:

ՓՄՁ-ի պետական աջակցությունը իրականացվում է տարեկան ծրագրով, սկսած 2001 թ.-ից՝ օրենքով սահմանված հիմնական ուղղություններին համապատասխան՝ ելնելով տվյալ ժամանակահատվածում զարգացման գերակայություններից⁵⁵: ՓՄՁ զարգացման քաղաքականության և ռազմավարության մշակման գործառնությունները վերապահված են ՀՀ Էկոնոմիկայի նախարարությանը, որը հանդիսանում է նաև ՓՄՁ

⁵³ Տե՛ս՝ Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին ՀՀ օրենքի (ՀՕ-121, ընդունվել է 2000 թվականի դեկտեմբերի 5-ին, վերջին անգամ փոփոխվել է 2010 թվականի դեկտեմբերի 22-ին) 2-րդ հոդվածը:

⁵⁴ Տե՛ս՝ նույն տեղում, 3-րդ հոդված:

⁵⁵ Տե՛ս՝ նույն տեղում, 4-րդ հոդված:

ուղորտի պետական աջակցության ծրագրերի մշակման համար պատասխանատու կառույց⁵⁶:

Ստացված տեղեկությունների համաձայն, Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման 2016-2018 թվականների ռազմավարության ծրագրի⁵⁷, ինչպես նաև Փոքր և միջին ձեռնարկատիրության տարեկան ծրագրերի շրջանակներում կոոպերատիվները որպես շահառու չեն դիտարկվել: Ուստի, առաջարկվում է, որպեսզի **Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման հետագա ռազմավարությունը և տարեկան ծրագրերը նպատակադրված լինեն նաև կոոպերատիվների ուղորտում առկա խնդիրների լուծմանը**: Այս մոտեցումը համահունչ է նաև Հայաստան-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրին⁵⁸:

Գյուղատնտեսական կոոպերատիվներին աջակցություն են տրամադրում նաև մի շարք միջազգային և տեղական կազմակերպությունների կողմից, մասնավորապես «Տեխնիկական օժանդակություն ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը՝ Եվրոպական հարևանության գյուղատնտեսության և գյուղական շրջանների զարգացման» (ԵՀԳԳԶՕ/ENPARD) ծրագրի շրջանակներում, որը ֆինանսավորվում է Եվրոպական միության և Ավստրիական զարգացման գործակալության կողմից և իրականացվում է ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության և ՄԱԿ-ի զարգացման ծրագրի կողմից: Ծրագրի միջոցով ԵՄ-ն աջակցել է 33 գրանցված կոոպերատիվների և հիմնվել է 18 կոոպերատիվ⁵⁹: Իսկ Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման եւ մրցունակության» վարկային ծրագրի շրջանակներում, որն իրականացնում է «Գյուղատնտեսական բարեփոխումների աջակցության ծրագրի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը, ձևավորվել են «Արոսոգտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվներ⁶⁰:

Գյուղատնտեսական կոոպերատիվներին պետական աջակցության ուղղությունները

Գյուղատնտեսական կոոպերատիվներին պետական աջակցության ուղղությունները հաստատվել են ՀՀ կառավարության 2014 թ. մարտի 27-ի N 442-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության 2014-2025 թվականների հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրով», ՀՀ կառավարության 2010թ. նոյեմբերի 4-ի N1476-Ն «ՀՀ գյուղի եւ գյուղատնտեսության 2010-2020թթ. կայուն զարգացման ռազմավարությունը և ՀՀ գյուղի եւ գյուղատնտեսության 2010-2020թթ. կայուն զարգացման ռազմավարության կատարումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» որոշմամբ, ինչպես նաև «Գյուղատնտեսական կոոպերատիվներին աջակցության պետական

⁵⁶ Տե՛ս՝ ՀՀ կառավարության 2015 թ. հոկտեմբերի 1-ի նիստի N 44 արձանագրային որոշում, 7-րդ կետ:

⁵⁷ Տե՛ս՝ ՀՀ կառավարության 2015 թ. հոկտեմբերի 1-ի նիստի N 44 արձանագրային որոշում:

⁵⁸ Տե՛ս՝ 57-րդ հոդված:

⁵⁹ Տե՛ս՝ https://eeas.europa.eu/delegations/armenia/52997/node/52997_hy :

⁶⁰ Տե՛ս՝ <http://minagro.am/համայնքների-գյուղատնտեսական-ռեսուրս/>:

ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2018թ. ապրիլի 17-ի N92-Ա հրամանով:

Գյուղատնտեսական կոոպերատիվներն աջակցություն են ստանում նաև մի շարք միջազգային և տեղական կազմակերպություններ:

Հայաստանի Հանրապետության 2014-2025 թվականների հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրով⁶¹ նախատեսվում է արոտագտագործողների կոոպերատիվների ձևավորման խթանում և գործունեության աջակցություն⁶², ինչպես նաև ագրարային ոլորտում կիրառվող քաղաքականության մեջ կարևորվում է տնտեսավարման ձևերի կատարելագործումը, մասնավորապես՝ կոոպերացիայի խթանման քաղաքականությունը, և այս առումով, առավել նպատակահարմար են գտնվել կոոպերացիայի զարգացման հիմնական չորս ուղղությունները՝ (1) օրենսդրության կատարելագործումը և համալրումը, (2) կոոպերացիայի ձևավորման տնտեսական խթանման մեխանիզմների կիրառումը, (3) կոոպերացիայի սկզբունքների, առավելությունների վերաբերյալ գյուղատնտեսությունում տնտեսավարողների իրազեկվածության մակարդակի բարձրացումը. (4) գյուղատնտեսությունում կոոպերացիայի ձևավորմանը խթանող ինստիտուցիոնալ կառույցների ձևավորումը⁶³: Գյուղի և գյուղատնտեսության հեռանկարային զարգացման տեսլականներից են նաև ինտենսիվ տեխնոլոգիաների կիրառմամբ առևտրային գյուղատնտեսական կազմակերպությունների, կոոպերատիվների և շուկայական ենթակառուցվածքների հետ ինտեգրված ընտանեկան գյուղացիական տնտեսությունների զարգացումը⁶⁴:

«Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարություն և Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարության կատարումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության N 1476-Ն որոշումը հաստատվել է դեռևս 2010 թվականի նոյեմբերի 4-ին: Վերոգրյալ որշմամբ նախատեսվում է մինչև 2020թ. «գյուղատնտեսությունում կոոպերացիայի տարբեր ձևերի խթանումը, որը իրականացվելու է հետևյալ ուղղություններով.

1) գյուղատնտեսության ոլորտի տարբեր ուղղվածություն ունեցող կոոպերատիվների համար օրենսդրության բարելավմամբ՝ դրանց ձևավորման և գործունեության բարենպաստ պայմանների ստեղծում,

2) կոոպերատիվների կայացմանը և գործունեության ընդլայնմանն ուղղված բազմակողմանի պետական աջակցություն,

3) գյուղացիական տնտեսությունների խոշորացման հետևողական քաղաքականության հիմքում կոոպերացիայի զարգացման ամրագրում.

⁶¹ Տե՛ս՝ ՀՀ կառավարության 2014թ. մարտի 27-ի N442-Ն որոշման հավելված:

⁶² Տե՛ս՝ նույն տեղում, կետ՝ 221(4):

⁶³ Տե՛ս՝ նույն տեղում, կետ՝ 222:

⁶⁴ Տե՛ս՝ նույն տեղում, կետ՝ 217(1):

4) գյուղատնտեսական մթերքների արտադրությունից մինչև սպառումը ապրանքային շարժին նպաստող կառույցների, մասնավորապես՝ գյուղատնտեսական հետքերքահավաքային ենթակառուցվածքների, արտադրանքների իրացման լոգիստիկ համակարգի՝ պահպանման, վերամշակման, փաթեթավորման և փոխադրման կարողությունների ձևավորմանը, հանրապետության մեծ քաղաքներում հանգստյան օրերի գյուղատնտեսական տոնավաճառների կազմակերպմանը, բոլոր մարզերի և տարածաշրջանների ընդգրկումով մեծածախ վաճառքի համակարգի ստեղծման նպատակով կոոպերացիայի տարբեր ձևերի զարգացմանն աջակցություն:

5) սննդամթերքի անվտանգության պահանջներին համապատասխան սպանդի կազմակերպման նպատակով՝ սպանդանոցների համակարգի ընդլայնում, մսի սառեցման, տեսակավորման, փաթեթավորման և վաճառքի կանոնակարգում (ներառյալ կենդանի անասունների):

6) կաթի հավաքման կետերի և սպառողական կոոպերատիվների համակարգի ընդլայնման աջակցություն, կաթնամթերքների արտադրության մեջ թարմ և վերամշակված կաթի օգտագործման կարգավորում, սննդամթերքի անվտանգության պահանջներին համապատասխան պահպանման, տեսակավորման, փաթեթավորման և վաճառքի կանոնակարգում:

7) գյուղատնտեսական արտադրանքների, հատկապես՝ թարմ մրգերի և բանջարեղենների միջնորդավորված վաճառքի սահմանափակում, կոոպերացիայի զարգացման միջոցով մանրածախ առևտրի օբյեկտներին մատակարարվող ապրանքների մեծածախ հավաքման կետերի ստեղծում, դրանց կարողությունների ընդլայնում, հատկապես՝ պահպանման, տեսակավորման, փաթեթավորման և փոխադրման միջոցներով վերազինման աջակցություն:

8) տարբեր մեխանիզմների կիրառմամբ՝ վարկերի տոկոսադրույքի սուբսիդավորում, գրավի երաշխիքների տրամադրում, գրավի առարկաների ցանկի ընդլայնում և այլն, գյուղատնտեսական վարկավորման մատչելիության բարձրացում:

9) գյուղատնտեսությունում վարկավորման ծավալների ավելացում՝ մինչև 2020թ. այն հասցնելով ճյուղի ավելացված արժեքի (համախառն ներքին արդյունքի) 14-17 % տոկոսի 2008թ. 2.4 տոկոսի դիմաց:

10) ապահովագրական համակարգի ներդրման համար նախադրյալների և պայմանների ստեղծում՝ ապահովագրական ռիսկերի գնահատում, ռիսկերի մեղմացման միջոցառումների իրականացում և գյուղատնտեսությունում ապահովագրական համակարգի ներդրում:

Վերոգրյալ միջոցառումների իրականացման արդյունքում ակնկալվում է գյուղատնտեսության ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացում, տնտեսավարողների գործունեության պայմանների բարելավում, ճյուղի մատակարարումների ու սպասարկումների գործընթացի լավացում, գյուղատնտեսության արդյունավետության բարձրացում: Միջոցառումները նախատեսված են իրականացվել 2010-2020թթ. ընկած ժամանակահատվածում, իրականացնող մարմինն է՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը, ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը և ՀՀ մարզպետարանները: Միջոցառումների իրականացման համար պահանջվող ֆինանսա-

վորման մոտավոր գնահատականը 1 տարվա կտրվածքով կազմում է 400 մլն դրամ⁶⁵:

«Մպառողական կոոպերացիայի մասին» ՀՀ օրենքով⁶⁶ ամրագրված է սպառողական կոոպերատիվների զարգացմանը և նրանց տնտեսական ինքնուրույնության ամրապանդմանն ուղղված պետական աջակցության պարտավորությունը:

«Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» ՀՀ օրենքի⁶⁷ համաձայն, պետությունը սուբսիդավորման, նպատակային ծրագրերի իրագործման, բարենպաստ օրենսդրական դաշտի ձևավորման միջոցով խթանում է գյուղատնտեսական կոոպերացիայի զարգացումը, ագրոպարենային համակարգում կոոպերատիվների ստեղծումը, վերջիններիս գիտական, կադրային, տեղեկատվական և խորհրդատվական ապահովումը⁶⁸: Գյուղատնտեսական կոոպերատիվների պետական աջակցության ուղղությունները սահմանված են վերոնշյալ օրենքի 29-րդ հոդվածի 6-րդ մասով, համաձայն որի գյուղատնտեսական կոոպերատիվների պետական աջակցության հիմնական ուղղություններն են՝ 1) արդիական տեխնոլոգիաների ներդրման և տեխնիկական հագեցվածության աջակցությունը, 2) գյուղատնտեսական հումք վերամշակող, գյուղատնտեսությունում օգտագործվող ռեսուրսներ մատակարարող և արտադրանքն իրացնող ընկերությունների հետ պայմանագրային հարաբերությունների հաստատման աջակցությունը, 3) արտահանման ներուժ ունեցող կոոպերատիվների արտադրանքի մրցունակությունն արտերկրում բարձրացնելու նպատակով գործարար համաժողովների, ցուցահանդեսների, տոնավաճառների մասնակցության աջակցությունը, 4) խորհրդատվության, ուսուցման և արժանահավատ տեղեկատվության տրամադրման աջակցությունը, 5) գյուղատնտեսությունում ապահովագրական համակարգի ներդրմանն աջակցությունը, 6) գյուղատնտեսական վարկերի մատչելիության բարձրացմանն ուղղված քաղաքականության իրականացումը, 7) սննդամթերքի անվտանգության ապահովման և օրգանական գյուղատնտեսության զարգացմանն ուղղված պետական ծրագրերի իրականացումը, 8) հողերի բարելավման, ռոտզման, առաջնային սերմնաբուծության, բույսերի պաշտպանության, տոհմաբուծության և անասնաբուծության բնագավառներում միջոցառումների ֆինանսավորումը, 9) կոոպերատիվների կարևորության հասարակական ընկալմանն ուղղված ծրագրերի իրականացումը, 10) կրթության, վիճակագրության, հետազոտությունների գործընթացում կոոպերատիվների առաջնահերթ ներառումը, 11) սույն օրենքով և իրավական այլ ակտերով նախատեսված ուղղություններով աջակցությունը:

⁶⁵ Տե՛ս՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=63109> :

⁶⁶ Տե՛ս՝ 4-րդ հոդվածի 1-ին մասը:

⁶⁷ Ընդունված է 2015 թվականի դեկտեմբերի 21-ին, ուժի մեջ է մտել 09.01.2016:

⁶⁸ Տե՛ս՝ նույն տեղում:

Թեև օրենքն ուժի մեջ է մտել 2016թ. հունվարին, «Գյուղատնտեսական կոոպերատիվներին աջակցության պետական ծրագրի մշակման և հաստատման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության N 363-Ն որոշումն ընդունվել է միայն 2017 թ. ապրիլի 13-ին, իսկ «Գյուղատնտեսական կոոպերատիվներին աջակցության պետական ծրագիրը» հաստատվել է 2018թ. ապրիլի 17-ին ՀՀ գյուղատնտեսության նախարարի N92-Ա հրամանով: Ծրագրով նախատեսված են իրականացնել՝

- (1) խորհրդատվության, ուսուցման և տեղեկատվության հասանելիության և մատչելիության ապահովում՝ իրազեկվածության մակարդակի բարձրացմանն ուղղված դասընթացներ՝ կոոպերատիվի կարևորության, սկզբունքների, առավելությունների և առանձնահատկությունների, ինչպես նաև՝ գյուղատնտեսական կոոպերացիայի բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրական դաշտի վերաբերյալ, ինչպես նաև հաշվապահների վերապատրաստման դասընթացներ՝ գյուղ. կոոպերատիվների գործունեության հաշվապահական հաշվառման առանձնահատկությունների, կարգի և հաշվետվության կազմման վերաբերյալ;
- (2) ֆինանսական ռեսուրսների մատչելիության ապահովում՝ վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրով:

Ակնկալվում է, որ վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի շրջանակներում 2018թ.-ին կօգտվի 10 գյուղատնտ. կոոպերատիվ՝ շուրջ 300 տնտեսվարող (70 մլն դրամի վարկ) և կիրականացվի շուրջ 5 դասընթաց, խորհրդատվական ծառայություններից կօգտվի շուրջ 100 տնտեսվարող, տվյալ միջոցառման համար գումարը նշված չէ: Ըստ տրամադրած տեղեկության, ծրագրի արդյունքները հասանալի կլինեն միայն ս.թ. ապրիլին:

Հարցազրույցների մասնակիցները ծրագրի հետ կապված մի շարք խնդիրներ բարձրաձայնեցին, նախևառաջ անհասկանալի է, թե ինչպես և ինչ չափորոշիչներով են ընտրվել ծրագրի տվյալ միջոցառումները, քանի որ այդ բնագավառում կան այլ առաջնահերթ խնդիրներ: Փաստաթղթից պարզ չէ նաև ծրագրի հանրայնացման և հաղորդակցության պլանը (ինչպես և ով է իրազեկելու շահառուներին), ժամանակացույցը, խորհրդատվության և դասընթացների բյուջեն:

Ընդհանուր առմամբ, ռազմավարությունների և ծրագրերի կառուցվածքը վերանայման կարիք ունեն, քանի որ երբեմն, նպատակները ընդհանրացված են, փաստաթղթերից պարզ չեն միջոցառումների իրականացման հստակ ժամկետները, հստակ և տարանջատված չեն իրականացնող և պատասխանատու մարմինները, բացակայում է հանրայնացման և հաղորդակցման պլանը, հստակ չեն մոնիթորինգի մեխանիզմները (ներգրավված կողմերը, մեթոդները, պարբերականությունը), չեն տարանջատվում թե՛ բյուջետային, թե՛ արտաբյուջետային միջոցները, ինչպես նաև փաստաթղթերի մշակման, ընդհունման, իրականացման, մոնիթորինգի և գնահատման գործընթացները միշտ չէ որ մասնակցային են:

Հարցազրույցների արդյունքում վերհանված խնդիրները

Իրավական փաստաթղթերի, փորձագետների հետ հարցազրույցների և զեկույցների, հաշվետվությունների ուսումնասիրության արդյունքում վեր են հանվել մի շարք խնդիրներ, մասնավորապես՝

- (1) գյուղ. կոոպերատիվների հիմնական մասը կախված է արտաքին օգնությունից, այդ իսկ պատճառով, այն կոոպերատիվները, որոնք ստեղծվել են տարբեր աջակցության ծրագրերի շրջանակներում, որպես կանոն, երկարատև չեն գործում;
- (2) Թեև կոոպերատիվները ձևավորվում են կամավորության սկզբունքով, այնուամենայնիվ, նախաձեռնության խիստ պակաս կա, ինչը կարող է պայմանավորված լինել իրազեկվածության ցածր մակարդակով կամ կոոպերատիվների դերի մասին թյուրընկալմամբ (դեռևս գործում են “խորհրդային կարծրատիպերը”);
- (3) վստահության ցածր մակարդակը՝ կոոպերատիվի անդամների կողմից որոշումների կայացման ոչ թափանցիկ գործընթացը, նույնպես կարող է խոչընդոտ հանդիսանալ կոոպերատիվների զարգացման համար;
- (4) հարկային քաղաքականության պատճառով գյուղ. կոոպերատիվների մեծ մասը նախըտրում են կասեցնել իրենց գործունեությունը: Թեև հարկային որոշ արտոնություններ սահմանված են գյուղատնտեսության ոլորտի համար, բայց ոչ գյուղ. կոոպերատիվների համար և ընդհանուր առմամբ, հարկային օրենսդրական դաշտը ոչ բարենպաստ է կոոպերատիվների համար;
- (5) ցածր անդամավճարները, ինչը թույլ չեն տալիս ապահովել կոոպերատիվի կայուն զարգացումը, նաև սեփականատիրության զգացում չի առաջացնում;
- (6) կառավարման, հաշվապահական, վարչարարական և այլ հմտությունների պակասը:
- (7) գյուղ. կոոպերատիվների համար չկան պետական դրամաշնորհներ, պարզեցված վարչական ընթացակարգեր, ներդրումների ֆինանսավորում կամ խրախուսում, ինչպես նաև պետական գնումների իրականացման գործընթացում որևէ աջակցություն կամ արտոնություններ,
- (8) չկա պետական քաղաքականություն/ծրագրեր, որոնք կխթանեին գյուղ. կոոպերատիվների մուտքը դեպի շուկա, կամ կնպաստեին առևտրային և ֆինանսական կապերի զարգացմանը/ստեղծմանը;
- (9) չեն իրականացվել ծրագրեր, որոնք կնպաստեին տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների զարգացմանը/կիրառմանը գյուղ. կոոպերատիվների ոլորտում;
- (10) գյուղ. կոոպերատիվները մեծամասամբ չեն կարողանում օգտվել տրամադրվող վարկերից, հաշվի առնելով մի շարք գործոններ, այդ թվում այն հանգամանքը, որ կոոպերատիվը չունի սեփականություն, ինչպես նաև այն հանգամանքը որ գյուղատնտեսական գործունեությունը չի ապահովագրվում և շատ խոցելի է բնական աղետներին;

- (11) թեև որոշ կազմակերպությունների կողմից իրականացվել են մի շարք ծրագրեր, որոնք նպատակաուղղված են եղել կանանց դերի բարձրացմանը գյուղ. կոոպերատիվների ոլորտում, այնուամենայնիվ, կին առաջնորդները այս ոլորտում դեռևս քիչ են; գրեթե չկան նման ծրագրեր երիտասարդների կամ հաշմանդամություն ունեցող անձանց համար կամ նրանց կողմից ստեղծված գյուղ. կոոպերատիվներ;
- (12) գյուղ. կոոպերատիվների վերաբերյալ վիճակագրությունը չի արտացոլում իրական պատկերը, քանի որ գյուղ. կոոպերատիվների մեծ մասը թեև գրանցված են, բայց փաստացի չեն գործում;
- (13) գյուղատնտեսական կոոպերատիվների համար գրեթե չեն իրականացվել Աշխատանքային օրենսդրության (օրինակ, աշխատողների և գործատուների իրավունքներն ու շահերը, անվտանգության ապահովման ու առողջության պահպանման պայմանները, հիգիենայի պահանջները բավարարող պայմանները, հանգստի իրավունքը և այլն) վերաբերյալ դասըթացներ:

Ստորև ներկայացված գյուղատնտեսական կոոպերատիվներին պետական աջակցության ծրագրերի բարելավմանն ուղղված առաջարկություններն ախանջվել են վերոգրյալ փաստաթղթերի, փորձագետների հետ հարցազրույցների, զեկույցների և հաշվետվությունների ուսումնասիրության արդյունքում:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ազգային ռազմավարությունների և պետական ծրագրերի կառուցվածքի և դրանց մշակման, ընդունման, իրականացման, մոնիթորինգի և գնահատման գործընթացների հետ կապված՝

1. ՀՀ կառավարության 2010թ. նոյեմբերի 4-ի N1476-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության կայուն զարգացման ռազմավարությունը նախատեսված էր 2010-2020 թվականների համար: Սակայն, հաշվի առնելով ոլորտում առաջացող նոր մարտահրավերները և զարգացումները, որոնց լուծումները կարող են ընդգրկված կամ բավարար չափով նախատեսված չլինել ռազմավարական ծրագրում, առաջարկում ենք սահմանել ավելի կարճ ժամանակահատված ռազմավարական ծրագրերի համար:
2. Անհրաժեշտ է ռազմավարությունների և ծրագրերի կառուցվածքը համապատասխանեցնել ՀՀ կառավարության 22.01.2015թ. նիստի N 2 արձանագրությամբ հավանության արժանացած հայեցակարգերի, ռազմավարությունների, ծրագրերի կազմման մեթոդական ուղեցույցի III-րդ և IV-րդ գլուխների պահանջներին: Մասնավորապես, վերոնշյալ ռազմավարության ծրագրում բացակայում են ռազմավարության շահառուների (շահառու խմբերի) անվանումները/անունները և վերջիններիս հետ քննարկումների արդյունքները, ռազմավարությամբ իրականացվող

միջոցառումների փուլերի հստակ ժամկետները, կոնկրետ փուլի ավարտին ակնկալվող իրավիճակը և արդյունքը, ռազմավարության իրականացման ռիսկերը, ռազմավարության գնահատման չափանիշները նախատեսված չեն ամբողջությամբ (տնտեսական ոլորտում առկա մրցակցությունը, տնտեսական վիճակը, տեխնիկական հնարավորությունները. մարդկային ռեսուրսները. իրավական խնդիրները, սոցիալական խնդիրները, կազմակերպչական խնդիրները և կարգավորման ազդեցությունը), իսկ ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների մոնիթորինգի ընթացակարգը նախատեսված է այլ իրավական ակտով՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարի հրամանով: Բացի այդ, հստակ և տարանջատված չեն իրականացնող և պատասխանատու մարմինները, բացակայում է հանրայնացման և հաղորդակցման պլանը, շահառուների ընտրության մեխանիզմները, մոնիթորինգի մեխանիզմները (ներգրավված կողմերը, մեթոդները, պարբերականությունը), տարանջատված չեն բյուջետային և արտաբյուջետային միջոցները: Ինչ վերաբերում է Գյուղատնտեսական կոոպերատիվներին աջակցության պետական ծրագրին, ապա այստեղ նույնպես բացակայում են միջոցառման կատարման հստակ ժամկետները կամ մասամբ են ներկայացված ֆինանսավորման աղբյուրը և յուրաքանչյուր միջոցառման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը՝ կից հաշվարկ-հիմնավորումներով, բացակայում է հանրայնացման և հաղորդակցման պլանը, շահառուների ընտրության մեխանիզմները և մոնիթորինգի մեխանիզմները:

3. Անհրաժեշտ է կատարված միջոցառումների վերաբերյալ հաշվետվությունները հրապարակել ՀՀ գյուղատնտեսության նախարարության կայքում:
4. Անհրաժեշտ է ռազմավարությունների և ծրագրերի մշակման, ընդունման, իրականացման, մոնիթորինգի և գնահատման գործընթացները դարձնել ավելի մասնակցային՝ ներգրավվելով և՛ շահառուներին, և՛ շահագրգիռ կողմերին համայնքային, մարզային և ազգային մակարդակներում:
5. Քանի որ ամփոփ վիճակագրության պակաս է նկատվում, անհրաժեշտ է բարելավել կոոպերատիվների վերաբերյալ ազգային վիճակագրությունը, ինչը թույլ կտա մշակել փաստարկված ռազմավարություններ և ծրագրեր:

Առաջարկություններ ազգային ռազմավարությունների և պետական ծրագրերի բովանդակության հետ կապված՝

6. Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման հետագա ռազմավարությունը և տարեկան ծրագրերը պետք է նպատակադրված լինեն նաև կոոպերատիվների ոլորտում առկա խնդիրների լուծմանը:
7. Հարկավոր է իրականացնել առանցքային կառույցների քարտեզագրում:
8. Գյուղատնտեսական կոոպերատիվների և գյուղատնտեսության ոլորտում գործող սպառողական կոոպերատիվների համար անհրաժեշտ է կազմակերպել և իրականացնել /կամ պատվիրակել, ֆինանսավորել/ մարդկային ռեսուրսների զարգացման ծրագրեր, մարքեթինգի աջակցության ծառայություններ, իրավաբանական և հարկային ծառայությունների, հաշվապահական և

աուդիտորական ծառայություններ/խորհրդատվություններ, խորհրդատվական ծառայություններ տեխնոլոգիայի և նորարարության մասին:

9. Անհրաժեշտ է դյուրացնել կոռպորատիվների համար ներդրումային ֆինանսների և վարկերի մատչելիությունը:
10. Անհրաժեշտ է խրախուսել առևտրային և ֆինանսական կապերի զարգացմանը կոռպորատիվների միջև:
11. Անհրաժեշտ է խթանել կոռպորատիվների մուտքը դեպի շուկա:
12. Անհրաժեշտ է խթանել գենդերային հավասարությունը կոռպորատիվներում և հատուկ ուշադրություն դարձնել կանանց մասնակցությանը կոռպորատիվների շարժման տարբեր մակարդակներում, մասնավորապես կառավարման և ղեկավարման մակարդակներում:
13. Անհրաժեշտ է խթանել երիտասարդների մասնակցությունը կոռպորատիվների շարժմանը:
14. Անհրաժեշտ է ներառել գյուղատնտեսական կոռպորատիվները պետական գնումների ծրագրերում:
15. Անհրաժեշտ է նպաստել կոռպորատիվների սկզբունքների և գործելակերպի վերաբերյալ կրթությանն ու ուսուցմանը:
16. Անհրաժեշտ է տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ իրականացնել ծրագրեր՝ ի նպաստ գյուղատնտեսական կոռպորատիվների գործունեության:

Օգտագործված գրականության ցանկ

Միջազգային և ներպետական օրենսդրություն

- ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր (1948թ.)
- ՄԱԿ-ի Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր (1966թ.)
- Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիա (1950թ.)
- Աշխատանքի միջազգային կազմակերպության թիվ 193 հանձնարարական՝ կոոպերատիվների խթանման վերաբերյալ (2002թ.)
- ՄԱԿ կոոպերատիվների զարգացման համար նպաստավոր միջավայրի ստեղծմանն ուղղված ուղեցույց (2001 United Nations Draft Guidelines aimed at Creating a Supportive Environment for the Development of Cooperatives)
- R189 –Job Creation in Small and Medium-Sized Enterprises Recommendation, 1998 (No. 189)
- Recommendation concerning General Conditions to stimulate Job Creation in Small and Medium-Sized Enterprises, Adoption: Geneva, 86th ILC session (17 Jun 1998) - Status: Up-to-date instrument
- ՀՀ Սահմանադրություն
- ՀՀ քաղաքացիական օրենսգիրք
- ՀՀ դատական օրենսգիրք
- ՀՀ հարկային օրենսգիրք
- «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին » օրենք
- «Սպառողական կոոպերացիայի մասին» ՀՀ օրենք
- «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին » ՀՀ օրենք
- ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 4-ի N 1476-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարությունը և Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարության կատարումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին»
- ՀՀ կառավարության 2014 թ. մարտի 27-ի N 442-Ն որոշում «Հայաստանի Հանրապետության 2014-2025 թվականների հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր հաստատելու մասին»
- ՀՀ կառավարության 2015 թ.-ի հոկտեմբերի 1-ի նիստի արձանագրային որոշում N 44 «Փոքր եվ միջին ձեռնարկատիրության զարգացման 2016-2018 թվականների ռազմավարությանը հավանություն տալու մասին»
- ՀՀ կառավարության 2015 թ.-ի հունվարի 22-ի «Հայեցակարգերի, ռազմավարությունների, ծրագրերի կազմման մեթոդական ուղեցույցին հավանություն տալու մասին» N 2 արձանագրային որոշումը
- ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2018թ. ապրիլի 17-ին N92-Ա հրամանը «Գյուղատնտեսական կոոպերատիվներին աջակցության պետական ծրագիրը հաստատելու մասին»

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպեր

- *Case of Sidiropoulos and Others v. Greece (57/1997/841/1047) 10 July 1998, ECHR*

ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումներ

- ՀՀ Սահմանադրական դատարանի 2008 թ. մայիսի 13-ի թիվ 753 որոշում

Եվրոպական միության արդարադատության դատարանի նախադեպեր

- C-78/08 - Paint Graphos and Others, ECJ, 2011

Հրատարակություններ

- Կոոպերատիվների օրենսդրության մշակման վերաբերյալ ուղեցույց, Հ. Հենրի, ԱՄԿ, 2012
- Cooperatives and the Sustainable Development Goals: A contribution to the 2030 Agenda for Sustainable Development, ILO, 2019
- Conceptual Framework for the Purpose of Measurement of Cooperatives and its Operationalization, ILO, Geneva, May 2017
- Recent Evolutions of the Social Economy in the European Union, 2016
- European Commission, Social Economy in the EU
- National acceptance of the concept “Social Economy”, Report by CIRIEC on The Social Economy in the European Union, European Economic and Social Committee, European Union, 2012
- Կոոպերատիվների օրենսդրական բարեփոխումներ. ուղեցույց Հայաստանի համար, Վ. Ուռուսյան
- Բարենպաստ բիզնես միջավայր. Մարտահրավերներ և առաջարկություններ, զեկույց, Իրավաբանների հայկական ասոցիացիա, Երևան, 2017թ.
- Գյուղատնտեսական կոոպերացիայի զարգացումը հայաստանում. Կարիքների գնահատում, զեկույց, «Մոզաիք» Էյ-Էմ ՍՊԸ

Կայքեր

https://www.ilo.org/wcmsp5/groups/public/---ed_norm/---relconf/documents/meetingdocument/wcms_358294.pdf

https://www.ilo.org/dyn/normlex/en/f?p=NORMLEXPUB:12100:0::NO::P12100_ILO_CODE:R189

https://www.ilo.org/global/topics/cooperatives/areas-of-work/WCMS_445131/lang--en/index.htm

https://ec.europa.eu/growth/sectors/social-economy_en

<https://www.ica.coop/en/cooperatives/cooperative-identity>

<https://www.arlis.am>

<https://www.e-gov.am>

<http://minagro.am>

<https://www.shen.am>